ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 63. Գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությունները

~~1. Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների իրավատերերի գույքային իրավունքների կառավարումն ապահովելու նպատակով, երբ այդ իրավունքների իրականացումն անհատական կարգով գործնականում դժվար է կամ անհնար, ստեղծվում են գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող ոչ առևտրային, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություններ (այսուհետ՝ կազմակերպություն):~~

~~Այդպիսի կազմակերպությունները ստեղծվում են անմիջականորեն հեղինակների կամ հարակից իրավունքների իրավատերերի կողմից և իրականացնում են գույքային իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարումը նրանցից գրավոր պայմանագրով ստացված լիազորությունների շրջանակում:~~

~~Գրանցման են ենթակա այն կազմակերպությունները, որոնք ներկայացնում են իրավատերերի զգալի մասին և ունեն իրենց գործունեությունն իրականացնելու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և անձնակազմ:~~

~~Նույն կատեգորիայի իրավունքների (հրապարակային կատարման, ձայնագրության միջոցով վերարտադրության, կերպարվեստի ստեղծագործության վերավաճառքից վարձատրության, հեռարձակման, մալուխային կապով հաղորդման, անձնական նպատակով վերարտադրության, կատարողների և հնչյունագիր արտադրողների իրավունքների) կոլեկտիվ հիմունքներով կառավարման նպատակով չի կարող ստեղծվել մեկից ավելի կազմակերպություն:~~

~~Կոլեկտիվ հիմունքներով կարող են իրականացվել՝~~

~~ա) հրապարակային կատարման,~~

~~բ) հանրությանը հաղորդման,~~

~~գ) ձայնատեսագրության միջոցով վերարտադրության,~~

~~դ) հեռարձակման և վերահեռարձակման,~~

~~ե) մալուխային կապով հաղորդման և վերահաղորդման գույքային իրավունքների կառավարումը:~~

~~2. Օգտագործման որևէ ձևի համար գույքային իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպության առկայության դեպքում սույն հոդվածով նախատեսված իրավունքներն իրականացվում են կազմակերպության միջոցով:~~

~~3. Կոլեկտիվ հիմունքներով կառավարվում է վարձատրության իրավունքը հետևյալ դեպքերում՝~~

~~ա) առևտրային նպատակով արտադրված հնչյունագիրը՝ հեռարձակման, վերահեռարձակման, մալուխով հաղորդման կամ վերահաղորդման միջոցով օգտագործելու.~~

~~բ) առևտրային նպատակով արտադրված հնչյունագրում ամրագրված կատարումը՝ հեռարձակման, վերահեռարձակման, մալուխով հաղորդման կամ վերահաղորդման միջոցով օգտագործելու.~~

~~գ) կերպարվեստի ստեղծագործության վերավաճառքի.~~

~~դ) ստեղծագործության բնօրինակը կամ օրինակները կամ կատարման ձայնագրության կամ ձայնատեսագրության օրինակը վարձույթով տալու.~~

~~ե) ստեղծագործությունները, կենդանի կատարումը կամ հնչյունագրում ամրագրված կատարումը (բացառությամբ առևտրային նպատակով արտադրված հնչյունագրերում ամրագրվածների), ինչպես նաև տեսալսողական ամրագրումներն ու հնչյունագրերը մալուխային վերահաղորդման միջոցով օգտագործելու։~~

~~4. Կազմակերպությունը հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների իրավատերերից, ինչպես նաև օտարերկրյա պետություններում գործող նույնատիպ կազմակերպություններից համապատասխան պայմանագրերով ստացված լիազորությունների սահմաններում լիցենզային պայմանագրերով թույլատրում է օգտագործողներին օգտագործելու ստեղծագործությունը կամ հարակից իրավունքների օբյեկտը, իրականացնում է հեղինակային վարձատրության հաշվարկումն ու հավաքումը օգտագործող կազմակերպություններից։~~

~~5. Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների օբյեկտներին առնչվող հարաբերությունները կազմակերպության և օգտագործողների միջև կարգավորվում են լիցենզային պայմանագրով։ Պայմանագրի պայմանները պետք է միանման լինեն նույն կատեգորիայի բոլոր օգտագործողների համար։ Կազմակերպությունը չի կարող հրաժարվել օգտագործողների հետ պայմանագիր կնքելուց՝ առանց բավարար հիմքերի։~~

~~6. Հասարակական միջոցառումներ կազմակերպողները և հեղինակային իրավունքի ու հարակից իրավունքների օբյեկտների այլ օգտագործողները չեն կարող հրաժարվել կազմակերպության հետ լիցենզային պայմանագիր կնքելուց՝ առանց բավարար հիմքերի։ Օգտագործողները նախապես ձեռք են բերում սույն օրենքով նախատեսված թույլտվությունը և օգտագործումից հետո՝ 15 օրվա ընթացքում, գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող համապատասխան կազմակերպությանն են ներկայացնում օգտագործված ստեղծագործությունների ցանկը, հեղինակներին հասանելիք վարձատրության ճշգրիտ հաշվարկման ու բաշխման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը։~~

~~7. Հեռարձակող կազմակերպությունները յուրաքանչյուր ամիս գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող համապատասխան~~

~~կազմակերպությանն են ներկայացնում հեռարձակված ստեղծագործությունների ցանկը:~~

1. Հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատերերն իրենց գույքային իրավունքների կառավարումն ապահովելու նպատակով, երբ այդ իրավունքների իրականացումն անհատական կարգով գործնականում դժվար է, ստեղծում են կոլեկտիվ կառավարման ոչ առևտրային, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություններ (այսուհետ՝ կոլեկտիվ կառավարման կազմակերպություն): Նման կազմակերպությունների ստեղծումը չի խոչընդոտում հեղինակային և հարակից իրավունքների իրավատերերին ներկայացվել (իրականացնել անհատական գույքային իրավունքների կառավարում) այլ իրավաբանական անձանց և քաղաքացիների միջոցով, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

2. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունն ունի իրավաբանական անձի կարգավիճակ, որը սույն օրենքով սահմանված, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության կամ գտնվելու վայր ունեցող իրավատերերի կողմից վերապահված լիազորությունների հիման վրա, որպես միակ նպատակ, իրականացնում է հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների օբյեկտների նկատմամբ գույքային իրավունքների կառավարում: Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունները հավատարմագրվում են սույն օրենքով սահմանված կարգով: Ընդ որում նույն կատեգորեաների իրավունքների համար կոլեկտիվ հիմունքներով կառավարման նպատակով չի կարող հավատարմագրվել մեկից ավելի կազմակերպություն:

3. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը կարող է իրականացնել՝

1) տարբեր կատեգորեաների օբյեկտների նկատմամբ մեկ իրավունք, կամ

2) մեկ կատեգորիայի օբյեկտի նկատմամբ տարբեր իրավունքներ, կամ

3) տարբեր կատեգորիաների օբյեկտների նկատմամբ տարբեր իրավունքներ:

4. Կոլեկտիվ հիմունքներով կարող են իրականացվել՝

1) հրապարակային կատարման,

2) հանրությանը հաղորդման,

3) ձայնատեսագրության միջոցով վերարտադրության,

4) հեռարձակման և վերահեռարձակման,

5) մալուխային կապով հաղորդման և վերահաղորդման գույքային իրավունքների կառավարումը:

5. Իրավատերերի (անդամների) կողմից լիազորությունները վերապահվում են պայմանագրով, որը կնքվում է գրավոր՝ կոլեկտիվ կառավարման կազմակերպության և իրավատերերի, ինչպես նաև կոլեկտիվ կառավարման այլ կազմակերպությունների միջև: Իրավատերերի հետ կնքվող պայմանագրում

նշվում է ռեպերտուարը, որի նկատմամբ գույքային իրավունքները հանձնվում են կառավարման: Ռեպերտուար է համարվում որոշակի իրավունքներով պահպանվող հրապարակված այն օբյեկտների (երաժշտական, տեսալսողական, դրամատիկական, երաժշտա-դրամատիկական, կերպարվեստի և այլ ստեղծագործությունների, հարակից իրավունքների) ցանկը, որոնց նկատմամբ գույքային իրավունքների կառավարումն իրականացնում է կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը (այսուհետ՝ ռեպերտուար): Հավատարմագրված կոլեկտիվ կառավարման կազմակերպությունն իր իրավասության շրջանակներում իրականացնում է նաև այն իրավատերերի գույքային իրավունքների կառավարումը, ովքեր չեն հրաժարվել գույքային իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարումից (ընդլայնված կոլեկտիվ կառավարում):

6. Միևնույն ժամանակ, կոլեկտիվ հիմունքներով իրավունքների կառավարման կազմակերպությունը պարտավոր է ստանձնել այդ իրավունքների կառավարումը, եթե իրավունքների այդպիսի կատեգորիայի կառավարումը վերաբերում է այդ կազմակերպության կանոնադրական նպատակներին և գործունեությանը: Կոլեկտիվ հիմունքներով իրավունքների կառավարման կազմակերպություններն իրավունք չունեն օգտագործելու հեղինակային և հարակից իրավունքների այն օբյեկտները, որոնց նկատմամբ բացառիկ իրավունքները փոխանցվել են իրենց կառավարմանը:

7. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը գործունեությունն իրականացնում է հավատարմագրվելուց հետո: Հավատարմագրումն ու վերահսկողությունն իրականացնում է մշակույթի ոլորտում լիազորված պետական մարմինը (այսուհետ՝ վերահսկող մարմին): Կոլեկտիվ կառավարման կազմակերպության հավատարմագրման կարգը և ժամկետները սահմանվում են կառավարության որոշմամբ:

8. Կոլեկտիվ կառավարման կազմակերպության անդամ նշանակում է իրավատեր կամ իրավատերերին ներկայացնող կազմակերպություն, ներառյալ այլ կոլեկտիվ կառավարման կազմակերպություններ և իրավատերերի ասոցիացիաներ, որոնք համապատասխանում են կոլեկտիվ կառավարման կազմակերպության անդամակցության պայմաններին (այսուհետ՝ անդամ): Անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպությունների դեպքում սույն օրենքի իմաստով անդամ են հանդիսանում այն իրավատերերը, ովքեր հանդիսանում են կազմակերպության շահառու և կնքել են կոլեկտիվ կառավարման լիազորություններ վերապահող պայմանագիր կոլեկտիվ կառավարման կազմակերպության հետ:

Հոդված 64. Կազմակերպության գործառույթները

~~1. Կազմակերպությունն իրականացնում է հետևյալ գործառույթները՝~~

~~ա) կնքում է օգտագործողների հետ լիցենզային պայմանագրեր՝ հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների օբյեկտների օգտագործման վերաբերյալ.~~

~~բ) համաձայնեցնում է օգտագործողների հետ վարձատրության չափը և լիցենզային պայմանագրի այլ պայմաններ.~~

~~գ) համաձայնեցնում է օգտագործողների հետ վարձատրության չափը սույն օրենքով նախատեսված այն դեպքերի համար, երբ վարձատրության հավաքումը կազմակերպությունն իրականացնում է առանց լիցենզային պայմանագիր կնքելու (օրինակ՝ վարձույթով տալը, առևտրային նպատակով հնչյունագրերի օգտագործումը և այլն).~~

~~դ) հավաքում է ստեղծագործության կամ հարակից իրավունքների օբյեկտների օգտագործման համար սույն հոդվածի «բ» և «գ» կետերով նախատեսված վարձատրությունը, բաշխում և վճարում իր կողմից ներկայացվող հեղինակային կամ հարակից իրավունքների իրավատերերին.~~

~~ե) իրավատերերի ցանկության դեպքում ի պահ է վերցնում հեղինակի ստեղծագործությունը կամ հարակից իրավունքների օբյեկտը և տալիս այդ մասին համապատասխան փաստաթուղթ.~~

~~զ) կնքում է փոխադարձ պահպանության համաձայնագրեր օտարերկրյա պետություններում գործող նմանատիպ կազմակերպությունների հետ.~~

~~է) հավաքում, բաշխում ու վճարում իրականացնելիս առաջացած փաստացի ծախսերը ծածկելու համար հավաքված գումարներից սահմանված կարգով կատարում է մասհանում.~~

~~ը) պահպանվող և չպահպանվող օբյեկտների միաժամանակյա օգտագործման դեպքում չպահպանվող օբյեկտների օգտագործման համար հաշվարկված գումարը փոխանցում է հատուկ հիմնադրամներ, որոնք ստեղծվում են իր կողմից՝ իր ներկայացրած հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների իրավատերերի համաձայնությամբ և ի շահ նրանց.~~

~~թ) հեղինակին կամ հարակից իրավունքների իրավատիրոջն օրենսդրությամբ սահմանված հայցային վաղեմության ժամկետում չհայտնաբերելու դեպքում նրան հասանելիք գումարն օգտագործում է ի շահ հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների այլ իրավատերերի և կազմակերպության զարգացման.~~

~~ժ) իրականացնում է այլ գործողություններ՝ համաձայն հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատերերի կողմից տրված լիազորությունների.~~

~~ժա) կատարում է ցանկացած իրավաբանական գործողություն, որն անհրաժեշտ է իր կողմից կառավարվող իրավունքների պաշտպանության համար.~~

~~ժբ) իրավատերերի ցանկությամբ նրանց ներկայացնում է ստեղծագործությունների կամ հարակից իրավունքների օբյեկտների օգտագործման մասին տեղեկատվություն։~~

~~2. Կազմակերպությունը սույն օրենքով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով:~~

1. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունն իրականացնում է հրապարակված ռեպերտուարի նկատմամբ գույքային իրավունքների կառավարում, մասնավորապես՝

1) կնքում է պայմանագրեր օգտագործողների հետ ստեղծագործությունների օգտագործման թույլտվության և վարձատրություն ստանալու վերաբերյալ, համաձայնեցնում օգտագործողների հետ վարձատրության չափը և պայմանագրի այլ պայմաններ.

2) կնքում է փոխադարձ պահպանության համաձայնագրեր օտարերկրյա պետություններում գործող նմանատիպ կազմակերպությունների հետ.

3) ստուգում է օգտագործողների՝ վարձատրության հաշվարկին վերաբերող փաստաթղթերը և վերահսկում է ռեպերտուարի օգտագործումը.

4) հաշվարկում և հավաքում է հեղինակների՝ ռեպերտուարի օգտագործումից առաջացած վարձատրությունը.

5) բաշխում է իրավատերերին հասանելիք գումարները.

6) ներկայացնում է իր՝ անդամ (շահառու) հանդիսացող և օտարերկրյա իրավատերերի շահերը դատարանում, պետական, ոչ պետական ու հասարակական մարմիններում.

7) հավաքում, բաշխում ու վճարում իրականացնելիս առաջացած փաստացի ծախսերը ծածկելու համար հավաքված գումարներից, որպես կառավարման վճար, իր կանոնադրությամբ սահմանված կարգով կատարում է գանձումներ: Այդ ծախսերը պետք է լինեն հիմնավորված ու փաստաթղթերով հաստատված:

2. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունն ի պահ է վերցնում հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների օբյեկտները և տալիս համապատասխան փաստաթուղթ:

3. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունն իրավատերերի ու օգտագործողների համար ստեղծում է էլեկտրոնային միջոցներով հաղորդակցվելու հնարավորություն՝ իրենց իրավունքների իրականացման և, համապատասխան դեպքերում, ռեպերտուարի օգտագործման վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով: Մասնավորապես, Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը պարտավոր է՝

1) ստեղծել (սահմանել) պաշտոնական կայք՝ «Ինտերնետ» տեղեկատվական հեռահաղորդակցական ցանցում իր գործունեության վերաբերյալ տեղեկատվություն տեղադրելու (հրապարակելու) համար (այսուհետ՝ պաշտոնական կայք).

2) ապահովել պաշտոնական կայքի հասանելիությունը շուրջօրյա ռեժիմով, պաշտոնական կայքում տեղադրվող տեղեկատվության հրապարակայնությունը,

ինչպես նաև այդպիսի տեղեկատվության անհատույց տրամադրումը.

3) ձևավորել այնպիսի գրանցամատյաններ, որոնք պարունակում են տեղեկություններ՝ իրավատերերի, հեղինակային և (կամ) հարակից իրավունքների օբյեկտների ու այդպիսի կազմակերպության կառավարմանը փոխանցված իրավունքների վերաբերյալ (այսուհետ՝ գրանցամատյաններ)՝ բացառությամբ այնպիսի տեղեկությունների, որոնք օրենքին համապատասխան, չեն կարող հրապարակվել՝ առանց իրավատիրոջ համաձայնության.

4) տեղադրել գրանցամատյանները պաշտոնական կայքում, ինչպես նաև իրականացնել դրանց վարումն ու ժամանակին թարմացումը՝ օգտագործողների հետ պայմանագրեր կնքելու և վարձատրությունը վճարելու նպատակով.

5) ներդնել այնպիսի ընթացակարգեր, որոնց միջոցով կոլեկտիվ հիմունքներով կառավարող մյուս կազմակերպությունները, ինչպես նաև այն իրավատերերը, ի շահ որոնց կազմակերպությունը կնքում է պայմանագրեր օգտագործողների հետ, կկարողանան ծանուցել գրանցամատյաններում առկա և նրա կողմից կառավարվող իրավունքներին առնչվող ցանկացած անճշտության մասին:

4.Կոլեկտիվ կառավարման կազմակերպության միջոցով պարտադիր կառավարման ենթակա է՝

1) առևտրային նպատակով արտադրված հնչյունագիրը՝ հեռարձակման, վերահեռարձակման, մալուխով հաղորդման կամ վերահաղորդման միջոցով օգտագործելու իրավունքը.

2) առևտրային նպատակով արտադրված հնչյունագրում ամրագրված կատարումը՝ հեռարձակման, վերահեռարձակման, մալուխով հաղորդման կամ վերահաղորդման միջոցով օգտագործելու իրավունքը.

3) կերպարվեստի ստեղծագործության վերավաճառքի իրավունքը.

4) ստեղծագործության բնօրինակը կամ օրինակները կամ կատարման ձայնագրության կամ ձայնատեսագրության օրինակը վարձույթով տալու իրավունքը.

5) ստեղծագործությունները, կենդանի կատարումը կամ հնչյունագրում ամրագրված կատարումը (բացառությամբ առևտրային նպատակով արտադրված հնչյունագրերում ամրագրվածների), ինչպես նաև տեսալսողական ամրագրումներն ու հնչյունագրերը մալուխային վերահաղորդման միջոցով օգտագործելու իրավունքը:

Սույն մասը չի կիրառվում ստեղծագործությունների արբանյակային կապով հեռարձակման վրա:

5. Հավատարմագրված կոլեկտիվ կառավարման կազմակերպությունն իր իրավասության շրջանակներում իրականացնում է նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կամ Հայաստանի Հանրապետության տարածքում մշտական բնակութվող այն իրավատերերի գույքային իրավունքների կառավարումը, ովքեր չեն հրաժարվել գույքային

իրավունքների կառավարումից: Իրավատերը, ով հավատարմագրված կոլեկտիվ կառավարման կազմակերպության հետ գույքային իրավունքների կառավարման լիազորություններ տրամադրելու վերաբերյալ գրավոր պայմանագիր չի կնքել, իրավասու է ցանկացած պահի, գրավոր ծանուցում ներկայացնելու միջոցով, ամբողջական կամ մասնակի հրաժարվել հավատարմագրված կոլեկտիվ կառավարման կազմակերպության կողմից իր իրավունքների կառավարումից: Սույն օրենքով սահմանված անդամակցության դադարեցման պայմանների վերաբերյալ դրույթը համապատասխան փոփոխություններով (mutatis mutandis) կիրառվում է կոլեկտիվ կառավարման կազմակերպության անդամ չհանդիսացող իրավատերերի նկատմամբ:Այն ժամանակահատվածում, որի ընթացքում անդամ չհանդիսացող իրավատերերի իրավունքների կառավարումն իրականացվում է կոլեկտիվ կառավարման կազմակերպության կողմից, նրանք՝ համապատասխան փոփոխություններով (mutatis mutandis), օգտվում են կոլեկտիվ կառավարման կազմակերպության անդամների սույն օրենքով նախատեսված իրավունքներից: Սույն մասը չի կիրառվում տեսալսողական ստեղծագործությունների արբանյակային կապով հեռարձակման վրա:

6. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի ներգրավել անկախ աուդիտորական կազմակերպության՝ իր հաշվապահական (ֆինանսական) հաշվետվության աուդիտ անցկացնելու, ինչպես նաև վարձատրության հավաքագրման, բաշխման և վճարման ընթացքում դրամական միջոցների հետ գործառնությունների վարումը և փաստաթղթային ձևակերպումը, կազմակերպության կողմից հաստատված մեթոդիկայով նախատեսված՝ հավաքագրված վարձատրության բաշխման պահանջներին համապատասխանությունը, հատուկ միջոցների հաշվին կատարված նպատակային դրամական մուտքերի և վճարումների հաշվառումը, ինչպես նաև կազմակերպության գործունեությանը ներկայացվող այլ պահանջներ ստուգելու նպատակով: Կազմակերպությունն աուդիտորական եզրակացության հաստատման (ստորագրման) օրվանից մեկամսյա ժամկետում պարտավոր է պաշտոնական կայքում հրապարակել աուդիտորական եզրակացությունը և համապատասխան հաշվապահական (ֆինանսական) հաշվետվությունը, որոնք հինգ տարվա ընթացքում պետք է հասանելի լինեն իրավատերերի համար: Հաշվապահական (ֆինանսական) հաշվետվությունը և աուդիտի և ստուգման ենթակա ցանկացած այլ տեղեկատվություն չեն կարող դասվել գաղտնի բնույթ ունեցող տեղեկության, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկատվության շարքին:

7. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը պետք է ունենա իրավատերերի խորհուրդ, որը պետք է բաղկացած լինի առնվազն հինգ անդամից: Իրավատերերի խորհրդի անդամները պետք է լինեն կազմակերպության անդամ, իսկ անդամություն չունեցող կազմակերպության դեպքում՝ շահառու: Կոլեկտիվ կառավարման կազմակերպության անդամներն (շահառուներն) իրավունք ունեն,

իրավատերերի խորհրդի միջոցով, վերահսկողություն իրականացնել կազմակերպության նկատմամբ՝ կանոնադրությամբ նախատեսված ներքին հսկողության մեխանիզմների հիման վրա: Իրավատերերի խորհրդում տարբեր կատեգորիայի անդամների (շահառուների) ներկայացվածությունը պետք է լինի արդար և հավասարակշռված: Իրավատերերի խորհրդի մեկ անդամ հավաստագրման որոշմամբ նշանակվում է պետական լիազոր մարմնի կողմից (ի պաշտոնե): Իրավատերերի խորհուրդը և գործադիր մարմնի ղեկավարը պարտավոր են կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը կառավարել թափանցիկ, արդյունավետ և ողջամիտ կերպով՝ օգտագործելով վարչական, հաշվապահական արդյունավետ ընթացակարգեր և ներքին վերահսկողության մեխանիզմներ:

8. Իրավատերերի խորհուրդն իրավասու է՝

1) հաստատել վարձատրության հաշվարկման, հավաքագրման, բաշխման կարգը,

2) հաստատել իրավատերերի և օգտագործողների հետ կնքվող պայմանագրերի օրինակելի ձևերը,

3) սահմանել դրույքաչափեր և առանձին գործողությունների համար վճարներ,

4) հաստատել իրավատերերի գրանցման ու գրանցամատյանների վարման կարգը,

5) իրականացնել կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 64.1. Կոլեկտիվ կառավարման կազմակերպության հավատարմագրումը.

1. Որպես կոլեկտիվ կառավարման կազմակերպություն կարող է հավատարմագրվել ցանկացած ոչ առևտրային իրավաբանական անձ, որն ունի՝

1) սույն օրենքով սահմանված պահանջներին համապատասխանող կանոնադրություն,

2) որոշակի ռեպերտուարի իրավատերերի գրանցամատյան (տվյալների բազա),

3) համապատասխան անձնակազմ և տեխնիկական միջոցներ (տեղեկատվական տեխնոլոգիաների և հաղորդակցման սարքավորումներ, ծրագրային ապահովում, տվյալների բազաներ, անհրաժեշտ տարածքներ և այլն) իրավունքների կոլեկտիվ կառավարումն արդյունավետ, պատշաճ և թափանցիկ իրականացնելու համար,

4) հեղինակային վարձատրության և (կամ) հարակից իրավունքների իրավատերերի վարձատրության հավաքագրման, բաշխման և վճարման մեխանիզմներ,

5) իրավատերերի ու օգտագործողների համար ստեղծված էլեկտրոնային

միջոցներով հաղորդակցվելու հնարավորություն:

2. Հավատարմագրման գործընթացը վերահսկող մարմինն իրականացում է ցանկացած իրավաբանական անձի դիմումի հիման վրա, որի մեջ նշվում են կոլեկտիվ կառավարման ենթակա իրավունքները: Դիմումին կից ներկայացվում են համապատասխան փաստաթղթեր, որոնք հիմնավորում են սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջները:

3. Հավատարմագրման դիմումի և դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության համար վերահսկող մարմինը ստեղծում է հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով), որի անհատական կազմը հաստատում է պետական լիազոր մարմնի ղեկավարը: Հանձնաժողովի կազմի առնվազն կեսը նշանակվում են մտավոր սեփականության բնագավառի՝ օրենքով լիազորված պետական կառավարման համակարգի մարմնի մտավոր սեփականության գրասենյակի առաջարկությամբ: Փաստաթղթերի ուսումնասիրությունն իրականացվում է այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Հանձնաժողովը փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում տալիս է հավատարմագրման համար օրենքով սահմանված պահանջների համապատասխանության կամ չհամապատասխանության մասին եզրակացություն:

4. Հանձնաժողովի եզրակացության հիման վրա վերահսկող մարմնի ղեկավարը որոշում է կայացնում հավատարմագրման կամ հավատարմագրումը մերժելու մասին:

5. Վերահսկող մարմնի ղեկավարը հավատարմագրման մասին որոշում է կայացնում, եթե Հանձնաժողովի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝

1) կազմակերպության կանոնադրությունը համապատասխանում է սույն օրենքով սահմանված պահանջներին,

2) կազմակերպությունն իր կանոնադրության համաձայն բաց է դիմումում նշված կառավարման ենթակա իրավունքների ցանկացած այլ իրավատերերի անդամակցության կամ կոլեկտիվ կառավարման լիազորություններ վերապահող պայմանագիր կնքելու համար,

3) վարձատրության հաշվարկման, հավաքագրման, բաշխման կարգը, իրավատերերի և օգտագործողների հետ կնքվող պայմանագրերի օրինակելի ձևերը չեն հակասում սույն օրենքի դրույթներին,

4) սույն օրենքով նախատեսված իր գործառույթներն իրականացնելու համար կոլեկտիվ կառավարման կազմակերպությունն ունի համապատասխան տեխնիկական միջոցներ և անձնակազմ,

5) որոշակի ռեպերտուարի համար ունի գրանցամատյաններ,

6) ստեղծել է իրավատերերի ու օգտագործողների համար ստեղծված էլեկտրոնային միջոցներով հաղորդակցվելու հնարավորություն:

6. Վերահսկող մարմնի ղեկավարը հավատարմագրումը մերժելու մասին

որոշում է կայացնում, եթե Հանձնաժողովի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված պայմաններին կամ հավատարմագրման կարգին

7. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությանը հավատարմագրելու մասին որոշում ընդունելու դեպքում Վերահսկող մարմինը կոլեկտիվ կառավարման կազմակերպությանը տալիս է հավատարմագրման վկայական: Հավատարմագրման վկայականի ձևը սահմանում է վերահսկող մարմինը:

8. Հավատարմագրման վկայականի գործողության ժամկետը հինգ տարի է, որը հաշվարկվում է սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված հավատարմագրման մասին որոշման ընդունման օրվանից: Հավատարմագրման վկայականի գործողության ժամկետը կարող է երկարաձգվել բազմակի անգամ, ամեն անգամ 5 տարի ժամկետով՝ պետական լիազոր մարմին ներկայացված դիմումի հիման վրա: Հավատարմագրման վկայականի գործողության ժամկետը կարող է երկարաձգվել բազմակի անգամ, ամեն անգամ 5 տարի ժամկետով՝ պետական լիազոր մարմին ներկայացված դիմումի հիման վրա: Դիմումը ներկայացվում է հավատարմագրման վկայականի գործողության ընթացիկ ժամկետի վերջին 3 ամսվա ընթացքում՝ կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

9. կոլեկտիվ կառավարման կազմակերպությանը հավատարմագրումը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում պետական լիազոր մարմինը մերժման մասին որոշումը հնգօրյա ժամկետում տրամադրում է դիմում ներկայացրած կազմակերպությանը: Պետական լիազոր մարմնի որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով:

64.2. Կոլեկտիվ կառավարման կազմակերպության նկատմամբ պետական վերահսկողությունը

1. Պետական լիազոր մարմինը վերահսկողություն է իրականացնում կոլեկտիվ կառավարման կազմակերպության գործունեության նկատմամբ՝ սույն օրենքի դրույթներին դրա համապատասխանության մասով:

2. Կոլեկտիվ կառավարման կազմակերպության գործունեության վերաբերյալ պետական լիազոր մարմինը կարող է՝

1) պահանջել ցանկացած փաստաթուղթ, տեղեկություն, բանավոր կամ գրավոր բացատրություն,

2) ստուգել գործունեության հաշվապահական հաշվառման և այլ փաստաթղթերը,

3) հասանելիություն ստանալ տեխնիկական ու էլեկտրոնային միջոցներին:

3. Պետական լիազոր մարմինն իրավասու չէ լուծել կոլեկտիվ կառավարման կազմակերպության և նրա անդամների (իրավատերերի), ինչպես նաև կոլեկտիվ

կառավարման կազմակերպության և օգտագործողների միջև ծագած վեճերը:

4. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը սեփական նախաձեռնությամբ, կանոնավոր, պատշաճ կերպով տեղեկություններ է ներկայացնում պետական լիազոր մարմին իր կանոնադրության կամ գործունեության որևէ փոփոխության վերաբերյալ մեկամսյա ժամկետում, որոնք կարգավորվում են սույն օրենքով: Հավատարմագրումից հետո մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 30-ը Պետական լիազոր մարմին է ներկայացնում հաշվապահական հաշվառման օրենսդրությանը համապատասխան պետական մարմիններին ներկայացվող իր տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ անկախ աուդիտորական եզրակացությունը և հաշվապահական հաշվառման օրենսդրությանը համապատասխան պետական մարմիններին ներկայացվող իր տարեկան ֆինանսական հաշվետվությունները հրապարակում է http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

5. Եթե վերահսկող մարմինը պարզում է, որ կոլեկտիվ կառավարման կազմակերպության գործունեությունը չի համապատասխանում սույն օրենքով սահմանված պահանջներին, ապա իր որոշմամբ կազմակերպությանը պարտավորեցնում է եռամսյա ժամկետում վերացնել հայտնաբերված խախտումները: Եթե սահմանված ժամկետում կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը չի վերացնում խախտումները, ապա վերահսկող մարմինը կարող է նոր որոշմամբ պահանջել որոշակի ժամկետում կոլեկտիվ կառավարման կազմակերպության իրավատերերի խորհրդի նոր ընտրություններ: Հիմնավոր պատճառների առկայության դեպքում պետական լիազոր մարմինը կարող է կոլեկտիվ կառավարման կազմակերպության դիմումի հիման վրա երկարաձգել սույն մասով նախատեսված ժամկետը:

6. Պետական լիազոր մարմինն իր որոշմամբ դադարեցնում է կոլեկտիվ կառավարման կազմակերպությանը տրամադրված հավատարմագրման վկայագրի գործողությունը, եթե՝

1) առաջացել են այնպիսի հանգամանքներ, որոնք սույն օրենքի համաձայն հավատարմագրումը մերժելու հիմք են հանդիսանում.

2) կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը սահմանված ժամկետներում չի վերացրել պետական լիազոր մարմնի կողմից հայտնաբերված խախտումները:

Հավատարմագրի չեղյալ հայտարարումը չի դադարեցնում կոլեկտիվ կառավարման կազմակերպության՝ մինչ այդ պահը հավաքագրված գումարները իրավատերերի միջև բաշխելու պարտավորությունները: Վերահսկող մարմինը հավատարմագրի չեղյալ հայտարարման որոշման կայացումից հետո մինչև չեղյալ հայտարարումն ուժի մեջ մտնելը իրականացնում է կոլեկտիվ կառավարող կազմակերպության նոր հավատարմագրում:

Հոդված 64.3. Կոլեկտիվ կառավարման կազմակերպության հարաբերությունները իրավատերերի հետ.

1. Որոշակի կատեգորիայի իրավատիրոջ դիմումի հիման վրա կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը պարտավոր է նրա հետ կնքել նույնատիպ պայմաններով պայմանագիր, ինչպիսին կնքել է նույն կատեգորիայի այլ իրավատերերի հետ: Իրավատերը կարող է կոլեկտիվ կառավարման կազմակերպությանը լիազորել կառավարելու իր իրավունքները, իրավունքների կատեգորիաները կամ հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների օբյեկտների տեսակները՝ անկախ իր քաղաքացիությունից, մշտական բնակության կամ գտնվելու վայրից:

2. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը խտրականություն չի դնում իր հետ պայմանագիր կնքած իրավատերերի և այն իրավատերերի միջև, ում իրավունքները կառավարում է մեկ այլ կոլեկտիվ կառավարման կազմակերպության հետ կնքած ներկայացուցչական պայմանագրի կամ առանց պայմանագրերի՝ օրենքի հիման վրա, մասնավորապես՝ կիրառվող դրույքաչափերի, կառավարման վճարների և իրավունքների օգտագործումից ստացված եկամուտների հավաքագրման և իրավատերերին հասանելիք գումարների բաշխման պայմանների վերաբերյալ:

3. Ռեպերտուարի օգտագործման դիմաց ստացված վարձատրության բաշխումը և վճարումը կոլեկտիվ կառավարման կազմակերպությունն իրականացնում է իր կանոնադրությամբ նախատեսված կարգի համաձայն: Բաշխման համար հիմք է հանդիսանում որոշակի ռեպերտուարի փաստացի օգտագործման չափը (համաչափության սկզբունք): Ռեպերտուարի օգտագործման դիմաց ստացված վարձատրությունը կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը բաշխում և վճարում է կանոնավոր, պատշաճ և ճշգրիտ՝ հավասար մոտեցում ապահովելով բոլոր իրավատերերի նկատմամբ:

4. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությանը չի թույլատրվում օգտագործել ստեղծագործությունների կամ հարակից իրավունքների օբյեկտների օգտագործման դիմաց ստացված վարձատրության գումարները, ինչպես նաև դրանց ներդրումներից գոյացած եկամուտը, բացառությամբ կառավարման համար նախատեսված կառավարման վճարների և ծախսերի: Կազմակերպությունն իրավունք չունի կազմակերպության անդամավճարների, ծախսերի և ֆինանսական օժանդակությունների համար պահելու հավաքագրված վարձատրության գումարի 50 տոկոսից ավելին: Ստեղծագործությունների կամ հարակից իրավունքների օբյեկտների օգտագործումից ստացված վարձատրության նկատմամբ կիրառելի կառավարման վճարը նախօրոք համաձայնեցվում և ամրագրվում է կոլեկտիվ կառավարման կազմակերպության և յուրաքանչյուր անդամի (շահառուի) միջև կնքվող պայմանագրում, որոնք չեն

կարող գերազանցել առանձին իրավատերերին հասանելիք գումարի 30 տոկոսը:

5. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունն իր անդամների (իրավատերերի) միջև վարձատրության գումարների բաշխումն ու վճարումը կատարում է 6 ամսից ոչ ուշ այն ֆինանսական տարվա ավարտից հետո, որի ընթացքում հավաքագրվել է ստեղծագործությունների կամ հարակից իրավունքների օբյեկտների օգտագործումից ստացված գումարները, եթե առկա չեն օբյեկտիվ պատճառներ, ինչպիսիք են՝ օգտագործողների կողմից հաշվետվություններ չներկայացնելը, իրավունքների կամ իրավատերերի նույնականացված չլինելը, ռեպերտուարի վերաբերյալ տեղեկություններն իրավատերերի հետ պարզված չլինելը, որոնք խոչընդոտում են կազմակերպությանը՝ պահպանելու նշված ժամկետը:

6. Օտարերկրյա հեղինակներին կամ իրավատերերին հավաքված վարձատրության վճարման հաճախականությունը սահմանվում է օտարերկրյա կազմակերպությունների հետ կնքված ներկայացուցչական պայմանագրով, սակայն ոչ ավելի ուշ՝ քան տարին մեկ անգամ:

7. Տիրազուրկ ստեղծագործությունների օգտագործումից գոյացած վարձատրության բաշխման վերաբերյալ որոշումը կայացվում է կոլեկտիվ կառավարման կազմակերպության իրավատերերի խորհրդի կողմից՝ այն ֆինանսական տարվա ավարտից երեք տարի հետո, որի ընթացքում հավաքվել է այդ վարձատրությունը:

Հոդված 64.4. Կոլեկտիվ կառավարման կազմակերպության հարաբերությունները օգտագործողների հետ.

1. Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունն օգտագործողների հետ կնքում է հեղինակային և (կամ) հարակից իրավունքների օբյեկտների օգտագործման համապատասխան եղանակների նկատմամբ այդպիսի կազմակերպության կառավարման ներքո գտնվող հեղինակային և (կամ) հարակից իրավունքների վերաբերյալ պայմանագրեր՝ հասարակ (ոչ բացառիկ) լիցենզիայի պայմաններով, և այդ օգտագործողներից վարձատրություն է հավաքագրում այդպիսի օբյեկտների օգտագործման իրավունք տրամադրելու դիմաց:

2. Առանձին օգտագործողի կամ օգտագործողների միության դիմումի հիման վրա կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը պարտավոր է նույնատիպ պայմաններով նրա հետ կնքել ռեպերտուարի օգտագործման համար հասարակ (ոչ բացառիկ) լիցենզային պայմանագիր:

3. Ռեպերտուարն օգտագործողները պարտավոր են կոլեկտիվ կառավարման համապատասխան կազմակերպությանը ներկայացնել հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների փաստացի օգտագործված օբյեկտների ցանկը, իրավատերերին հասանելիք վարձատրության ճշգրիտ հաշվարկման ու բաշխման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերն ու տեղեկությունները, այդ թվում՝

տեխնիկական կամ էլեկտրոնային միջոցներով:

4. Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է վարձատրության նվազագույն դրույքաչափեր: Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը նվազագույն դրույքաչափերը հրապարակում է իր ինտերնետային կայքէջում: Նվազագույն դրույքաչափերը պարտադիր են կոլեկտիվ կառավարման կազմակերպության և օգտագործողների համար, եթե վարձատրության համար նրանք ավելի բարձր գումարի վերաբերյալ համաձայնություն ձեռք չեն բերել: Ռեպերտուարն օգտագործողները պարտավոր են վճարել նվազագույն դրույքաչափերի չափով հավաստագրված կոլեկտիվ կառավարող կազմակերպությանը անկախ պայմանագրի կնքումից:

Հոդված 66. Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների պաշտպանությունը

1. Հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատերն իր իրավունքները պաշտպանելու նպատակով կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել դատարան:

2. Հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատերն իր իրավունքները պաշտպանելու նպատակով, դատական կարգով, իր իրավունքները խախտողից կարող է պահանջել՝

ա) իր իրավունքների ճանաչում.

բ) մինչև իրավախախտումը գոյություն ունեցող դրության վերականգնում և իրավունքը խախտող կամ խախտման վտանգ պարունակող գործողությունների կասեցում.

գ) նմանակված օրինակների, դրանց պատրաստման համար օգտագործվող նյութերի ու սարքավորումների բռնագրավում կամ ոչնչացում.

դ) վնասի հատուցում (ներառյալ՝ բաց թողնված օգուտը)՝ օրենքով սահմանված կարգով.

ե) հոնորարի կամ վարձատրության կրկնակի չափով փոխհատուցում, որը իրավատերը կստանար, եթե իրավախախտողը թույլտվություն ունենար հեղինակային իրավունքի օբյեկտի օգտագործման համար, կամ փաստացի խախտման վնասին համարժեք վնասների հատուցում, ներառյալ՝ բաց թողնված օգուտը.

զ) դատական վճռի հրապարակումը Հայաստանի Հանրապետությունում գործող զանգվածային լրատվության միջոցներով՝ դատարանի կողմից նախատեսված չափով և մասով, իրավախախտողի միջոցների հաշվին.

զ1) փոխհատուցում սահմանված նվազագույն աշխատավարձի 50-ապատիկից մինչև 2000-ապատիկի չափով.

է) իր իրավունքների պաշտպանության հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ միջոցների կիրառում:

3. Սույն հոդվածի երկրորդ մասի «գ», «դ» և «ե» կետերում նշված միջոցների ընտրության իրավունքը պատկանում է հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջը:

4. Հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատերը կարող է պահանջել, որ այն անձինք, ովքեր որևէ կերպ առնչվում են սույն օրենքով պահպանվող իրավունքների խախտմանը (արտադրողներ, տպագրողներ, ներկրողներ, նմանակված օրինակներ կամ իրավախախտում առաջացնող սարքավորումներ տիրապետողներ), պահանջի դեպքում անմիջապես տեղեկություններ հայտնեն կեղծ օրինակների արտադրությանը և տարածմանը մասնակցող երրորդ անձանց, ինչպես նաև այդ օրինակների ձեռքբերման աղբյուրների ու տարածման ուղիների մասին և ներկայացնեն խախտմանն առնչվող փաստաթղթերը:

Սույն մասում նշված անձինք, որոնք հրաժարվում են տրամադրել պահանջված տեղեկությունը կամ փաստաթղթերը, պատասխանատվություն են կրում այն վնասների համար, որոնք կարող են պատճառվել նշված պարտականությունը կատարելուց հրաժարվելու հետևանքով:

5. Հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ չպահանջած նմանակված օրինակները, ինչպես նաև դրանց ստեղծման և վերարտադրման համար օգտագործված նյութերն ու սարքավորումները դատարանի վճռով կարող են ոչնչացվել:

6. Սույն հոդվածի 2-րդ մասի «զ1» կետով նախատեսված դեպքերում իրավատերը պարտավոր չէ ապացուցել պատճառված վնասի չափը: Նշված դեպքում փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը հաշվի է առնում կոնկրետ գործի առանձնահատկությունները, ներառյալ՝ խախման բնույթը և հետևանքները, իրավախախտող անձի կարգավիճակը, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը, մեղքի առկայությունը և աստիճանը, գույքային դրությունը, իրավատիրոջ պահանջով խախտումը վերացրած լինելու հանգամանքը: Ընդ որում, թե իրավատերը մինչև դատարան դիմելը ծանուցել է իրավախախտողին իրավախախտման վերաբերյալ՝ պահանջելով իրավախախտողից դադարեցնել իրավախախտումը և տեղեկացնելով իրավախախտումը չդադարեցնելու դեպքում սույն կետով նախատեսված հետևանքների մասին, և իրավախախտողը հրաժարվել է դադարեցնել իրավախախտումը կամ չի դադարեցրել իրավախախտումը իրավատիրոջ ծանուցումը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում, ապա փոխհատուցման չափը սահմանվում է ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի 200-ապատիկի չափով: Մի քանի իրավատեր ունեցող ստեղծագործության դեպքում, սույն կետով նախատեսված ընդհանուր փոխհատուցման չափը չի կարող գերազանցել նույն կետով նախատեսված չափը

և փոխհատուցվում է պահանջ ներկայացրած իրավատիրոջը այն համամասնությամբ, որը ստեղծագործության օգտագործումից ստացվող օգուտների բաշխման համար նախատեսված է իրավատերերի միջև համաձայնությամբ կամ օրենքով:

7. Սույն հոդվածի 2-րդ մասի «զ1» կետով նախատեսված սահմանված պահանջը չի կարող ներկայացվել, երբ ստեղծագործության օգտագործման համապատասխան եղանակի համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանվել են վարձատրության նվազագույն դրույքաչափեր, այդ թվում՝ կոլեկտիվ կառավարման կազմակերպության կողմից ռեպերտուարի օգտագործմամբ խախտումների դեպքում: Նման դեպքում իրավատերը կամ կոլեկտիվ կառավարման կազմակերպությունն իրավունք ունի իրավունքների խախտողից պահանջել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված վարձատրության նվազագույն դրույքաչափերի կրկնակիի չափով փոխհատուցում՝ հիմք ընդունելով սույն հոդվածի 2-րդ մասի «ե» կետը: